մինչև մօտ Բ ժամս և էանց: Օրս տօնանման եկաւ՝ մի քանի կտոր նաւ մնացեալն ի պատերազմէն:

Կիրակի Ը–ին Ամիրխանի եղբօր Միքայէլ եպիսկոպոսի ժողով արարին ի մեր եկեղեցին: Եւ օրս մեր Վարդապետն ի յՈւսկիւտարն եկն ի Պուրսայոյ և էջմիածնի Տէր Յովանէսն ևս եկաւ աստ. լսելով զվաղջան կաթողիկոսին՝ ի Թոխաթոյ դարձեալ է:

Դշի օրս (10 Յ––լի–) Խսքէրի Սէֆէրն մեռաւ և բերին ի ժամ և զԱռաջնորդն ևս ի վերայ նորա բերին: Եւ յետ ի հասարակել աւուրս տրուպս և Մինաս պալին և Բ Ջուղայեցիք ևս ընդ մեզ ի յՈւսկիւտարն առ Վարդապետն մեր գնացաք:

Կիրակի ԺԵ–ի:

Բշի (16 Յ––լի–). Վարդապետն ի յԱստուածածին եկեղեցին եկն:

Կիրակի Վարդավառ ԻԲ–ի. երեկոյին մօտ առ Վարդապետն էաք: Եւ ի գիշերին եղև սաստիկ և մեծ որոտումն, ճայթմունք ընդ կայծակամբ. այնպէս էր ցոլմունք որոտմանց որ զբոլոր քաղաքս լուսաւոր առնէր և որոտմունքն զերկիրս դողացուցանէր, որպէս թէ ի պարիսպ քաղաքս հարկանէր զորոտն և ի վայր հոսէր զցոլմունքն, որ արթնացեալ մեծաւ սարսիւ սասանելով, ամենայն քաղաքս ի վերայ երեսաց անկանելով և կարդացին առ Աստուած մեծաւ հառաչանօք որպէս զի ներեսցէ. զի սարսափն պատեաց և դողումն պաշարեաց զլսելն ահագին որոտմանցն՝ համարելով զմեզ թէ տապալիցիմք ի ժամուս եւ ի պահուս տամբք[1]) մերովք և քաղաքաւ, որպէս երբեմն զՆինուէացոցն կարծէաք գոլ: Բայց խնայեաց զստեղծուածս ձեռին Արարիչն մեր վասն պաղատանաց և աղօթից արժանաւորաց, սակաւ սակաւ ցած-

1) տամբ.